# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգավան համայնք
22, Արարատի մարզ, գ.Այգավան, 0234-6-00-89 aygavan1@mail.ru

05 մարտի 2014թ.

## ԱՅԳԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ԱՅԳԱՎԱՆ «ԺՊԻՏ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 28 հոդվածի պահանջներով :

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հաստատել Այգավանի գյուղապետարանի աշխատակազմի, <<Ժպիտ>> մսուր - մանկապարտեզի կանոնադրությունները , աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ
2. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԻՐԱՄ
4. ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ
5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԳԻՆ
6. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ
7. ՄԻՐՈՅԱՆ ՆՈՐԱ

Համայնքի ղեկավար՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԱԶՄՎԱԾ Է 14.01.2014Թ.

ԱՍՏԱՏՎԱԾ Է

ԲԱՂԿԱՑԱԾ Է 7 ԹԵՐԹԻՑ

ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ

Հավելված 1

Ավագանու թիվ 2 որոշման

05.03.2014թ.

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգավանի (այսուհետ՝ համայնք) գյուղապետարանի աշխատակազմը (այսուհետ՝ Աշխատակազմ) – իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող համայնքային կառավարչական հիմնարկ է, որի միջոցով համայնքի ղեկավարը և օրենքով ու համայնքի ավագանու (այսուհետ՝ ավագանի) կանոնակարգով նախատեսված դեպքերում նաև ավագանին կազմակերպում են իրենց գործունեությունը: «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգավանի գյուղապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկը հանդիսանում է 1997թվականի հունվարի 7-ին հաշվառված «ՀՀ Արարատի մարզի Այգավանի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմ» հիմնարկի իրավահաջորդը:

2) Աշխատակազմն իր գործունեությունն իրականացնում է համայնքային ծառայողների, համայնքի ղեկավարի և ավագանու անդամների, ինչպես նաև անձնակազմի լիազորությունների կատարման համար անհրաժեշտ տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց միջոցով:

3)Աշխատակազմում իրականացվում է համայնքային ծառայություն որը կարգավորվում է «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով:

4) Ավագանին և համայնքի ղեկավարն Աշխատակազմի միջոցով համայնքում իրականացնում են օրենքով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված սեփական և պետության կողմից պատվիրակված լիազորությունները, համակարգում համայնքի ենթակայության հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների գործունեությունը, կազմակերպում հանրապետական գործադիր մարմինների և դրանց համապատասխան տարածքային ծառայությունների հետ հարաբերությունները:

5) Աշխատակազմը ստեղծվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է ավագանու որոշմամբ:

6) Աշխատակազմի լիազորությունները սահմանվում են օրենքներով, այլ իրավական ակտերով, այդ թվում՝ ավագանու որոշումներով, համայնքի ղեկավարի որոշումներով ու կարգադրություններով, ինչպես նաև սույն կանոնադրությամբ:

7) Աշխատակազմը գործում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, այլ օրենքների ու իրավական ակտերի, սույն կանոնադրության հիման վրա:

8) Աշխատակազմն իր իրավասության սահմաններում կարող է համայնքի անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող

9) Աշխատակազմի նպատակն ու խնդիրը համայնքի ղեկավարի և ավագանու՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին համայնքի ղեկավարի մասնակցության ապահովումն է:

10) Աշխատակազմն ունի Հայաստանի Հանրապետության կամ համայնքի զինանշանի պատկերով և իր` հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ, այլ անհատականացման միջոցներ:

11) Աշխատակազմն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

12) Աշխատակազմը չի կարող իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Աշխատակազմի կատարած գործառույթների և մատուցած ծառայությունների համար կարող են գանձվել պետական և տեղական տուրքեր, տեղական վճարներ` օրենքով սահմանված չափով և կարգով:

13) Աշխատակազմն իր ֆինանսական գործառնություններն իրականացնում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

14) Աշխատակազմը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է հաշվառման պետական ռեգիստրի համապատասխան ստորաբաժանման կողմից:

15) Աշխատակազմի լրիվ անվանումն է` «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգավանի գյուղապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ:

16) Աշխատակազմի գտնվելու վայրն է` Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ գյուղ Այգավան Շ.Ազնավուրի 7 հասցեն:

## 2. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

1) Աշխատակազմի կառավարումն իրականացնում է համայնքի ղեկավարը` օրենքով, այլ իրավական ակտերով իրեն վերապահված լիազորությունների սահմաններում:

2) Համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է Աշխատակազմի (մասնագետների) համայնքային բյուջետային հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով:

3) Համայնքի ղեկավարը`

ա. Աշխատակազմի և բյուջետային հիմնարկների,կանոնադրությունների,աշխատակիցների թվաքանակի,հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագծերը և դրանցում առաջարկվող փոփոխությունները ներկայացնում է ավագանու հաստատմանը

բ. օրենքով նախատեսված դեպքերում և կարգով նշանակումներ է կատարում Աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններում, ինչպես նաև համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառում խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ.

գ. օրենքով նախատեսված դեպքերում շնորհում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության դասային աստիճաններ, զրկում է դասային աստիճաններից.

դ. ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ նշանակումներ է կատարում հայեցողական պաշտոններում:

ե. իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ լիազորություններ:

4) Համայնքի ղեկավարի տեղակալը՝

ա. համակարգում է համայնքի ենթակայության հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների աշխատանքները՝ համայնքի ղեկավարի կողմից իրեն համձնարարված բնագավառներում.

բ. Աշխատակազմի նպատակներին և խնդիրներին համապատասխան իրականացնում է իրեն հանձնարարված բնագավառների՝ Աշխատակազմին (մասնագետներին) տրվող կոնկրետ հանձնարարականների և առաջադրանքների սահմանում, դրանց կատարման նկատմամբ վերահսկողություն.

գ. համայնքի ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում է ավագանու և համայնքի ղեկավարի մոտ քննարկվելիք հարցերի նախնական քննարկումներ.

դ. համակարգում է իրեն հանձնարարված բնագավառներում Աշխատակազմի մասնագետների, ինչպես նաև համայնքի ենթակայության հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կողմից իրականացվող աշխատանքների մասնագիտական ուսումնասիրությունները և աշխատանքների ընթացքի օպերատիվ վերլուծությունը.

ե. իր լիազորությունների սահմաններում համագործակցում է պետական կառավարման և այլ մարմինների, կազմակերպությունների ու հիմնարկների հետ.

զ. իրեն հանձնարարված բնագավառներում համակարգում է համապատասխան զարգացման ծրագրերի մշակման ու իրականացման աշխատանքները.

է. պարբերաբար համայնքի ղեկավարին է ներկայացնում տեղեկատվություն իրեն հանձնարարված բնագավառներում տիրող վիճակի մասին.

ը. ապահովում է իրեն հանձնարարված բնագավառներում ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների ու կարգադրությունների կատարման նկատմամբ վերահսկողությունն ու արդյունքների մասին տեղեկացնում համայնքի ղեկավարին.

թ. համայնքի ղեկավարին և Աշխատակազմի քարտուղարին ներկայացնում է առաջարկություններ վերջիններիս իրավասությանը վերապահված հարցերի վերաբերյալ.

ժ. համայնքի ղեկավարի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ:

ի. Համայնքի ղեկավարի տեղակալը փոխարինում է համայնքի ղեկավարին վերջինիս բացակայության ժամանակ:

5) Համայնքի ղեկավարի տեղակալին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը:

6) Աշխատակազմի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Աշխատակազմի քարտուղարը

Աշխատակազմի քարտուղարը՝

ա. օրենքով, այլ իրավական ակտերով, համայնքի ղեկավարի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Աշխատակազմի ընթացիկ գործունեությունը և կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

բ. իր իրավասության շրջանակում իրականացնում է Աշխատակազմի աշխատանքների համակարգումը.

գ. վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի և ավագանու որոշումների կատարման, ինչպես նաև աշխատակազմի աշխատանքային կարգապահության պահպանման նկատմամբ:

դ. մշակում և համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում Աշխատակազմի աշխատանքային տարեկան և եռամսյակային ծրագրերը, վերահսկողություն է իրականացնում դրանց կատարման նկատմամբ, արդյունքների մասին զեկուցում է համայնքի ղեկավարին.

ե. ապահովում է համայնքի բյուջետային միջոցներից ծախսերի կատարումը.

զ. կազմակերպում է համայնքի քաղաքացիների ընդունելությունը, նրանց առաջարկությունների, դիմումների ու բողոքների սահմանված կարգով քննարկումը, ինչպես նաև Աշխատակազմի գործավարության և տեխնիկական սպասարկման աշխատանքները.

է. համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում Աշխատակազմի տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը, այդ թվում՝ ապահովում է Աշխատակազմի հաշվապահական հաշվառումը վարելը, ֆինանսական հաշվետվություններ կազմելն ու ներկայացնելը, ինչպես նաև Աշխատակազմի տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը, դրա կատարողականը, տարեկան ֆինանսական հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը, միջոցներ է ձեռնարկում ստուգումների արդյունքում հայտնաբերված ֆինանսական խախտումների վերացման համար.

ը. համայնքի ղեկավարի ստորագրությանն է ներկայացնում համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների նախագծերը.

թ. ապահովում է Աշխատակազմում համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան՝ անձնակազմի կառավարման հետ կապված գործառույթների իրականացումը.

ժ. օրենքով նախատեսված դեպքերում և կարգով նշանակումներ է կատարում Աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններում, ինչպես նաև համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ կիրառում խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ.

ի. օրենքով սահմանված դեպքերում շնորհում է Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության դասային աստիճաններ, զրկում համայնքային ծառայության դասային աստիճաններից.

լ. օրենքով, իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման ենթակա ցուցումներ.

խ. իրականացնում է օրենքով և իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

ծ. Աշխատակազմի քարտուղարի բացակայության կամ պաշտոնական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում նրան փոխարինելու հարցը կարգավորվում է համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

7) ա. Աշխատակազմի ֆինանսական գործառույթներ իրականացնող ծառայությունը կատարում է Աշխատակազմի ֆինանսական և հաշվապահական ծառայությունները,գործում է աշխատակազմի քարտուղարի անմիջական ենթակայությամբ և իրականացնում Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով իր վրա դրված լիազորությունները:

բ. Աշխատակազմի ֆին. ծառայությունը իր իրավասությունների սահմաններում պատասխանատու է համայնքի բյուջեի նախագծի կազմման, հաշվապահական հաշվառումը վարելու, Աշխատակազմի ֆինանսական (բյուջետային), հարկային, վիճակագրական, պարտադիր վճարների մասին հաշվետվությունները ժամանակին կազմելու համար:

## 3. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՒՅՔԸ

1) Աշխատակազմի գույքը օրենքով սահմանված կարգով ձևավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից համայնքի սեփականությանը փոխանցված և (կամ) համայնքի սեփականությունը համարվող գույքից, որն Աշխատակազմի տիրապետմանը, տնօրինմանը և օգտագործմանը հանձնվում է (ամրացվում է) ավագանու համապատասխան որոշմամբ: Աշխատակազմի գույքը ենթակա է հաշվառման նրա հաշվեկշռում:

2) Աշխատակազմն իրավունք ունի օրենքով, այլ իրավական ակտերով և իր կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով, իր գործունեության նպատակներին ու գույքի նշանակությանը համապատասխան օգտագործելու, տիրապետելու և տնօրինելու իրեն հանձնված գույքը:

## 4. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1) Համայնքի ղեկավարն իր պաշտոնը ստանձնելու օրվանից ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում, մշակում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում Աշխատակազմի աշխատակիցների քվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը:

2) Բյուջետային հիմնարկները և ոչ առևտրային կազմակերպություններն ունեն կանոնադրություններ, որոնք համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատվում են համայնքի ավագանու կողմից:

## 5. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1) Աշխատակազմը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և համապատասխան մարմիններ է ներկայացնում ֆինանսական, հարկային, պարտադիր վճարների, վիճակագրական հաշվետվություններ, հաշվարկներ, հայտարարագրեր:

2) Աշխատակազմի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

1) Աշխատակազմի վերակազմակերպման և նրա գործունեության դադարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով:

Աշխատակազմի քարտուղար՝ Մ. Հարությունյան

Հավելված թիվ 2
Ավագանու թիվ 2 որոշման
05.03.2014թ.

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆԻ <<ԺՊԻՏ>>

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

/ Նոր խմբագրությամբ /

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ՀՀ Արարատի մարզի Այգավանի <<Ժպիտ>> մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը / այսուհետ մանկապարտեզ\ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որն իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագրեր, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ձևով է բերում և իրականացնում սույն կանոնադրությամբ ամրագրված իր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ իրավունքներ և պարտականություններ:

Մանկապարտեզը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգավան համայնքի ղեկավարի14.05.2010թ. թիվ 36 և Արարատի մարզի Այգավան գյուղական համայնքի ավագանու 19.05.2010թ. թիվ 4 որոշումների համաձայն, <<ՀՀ Արարատի մարզի Այգավան գյուղի <<ԺՊԻՏ>> մանկապարտեզ>> բյուջետային հիմնարկի / գրանցված ՀՀ պետռեգիստրում՝ 02.01.1997թ. գր. h51.0069, վկ.հբ 001778/ վերակազմավորման ձևապարհով վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է նրա իրավահաջորդը:

2. Մանկապարտեզն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության <<Քաղաքացիական օրենսգրքով>>/ այսուհետ՝ Օրենսգիրք/,<<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով /այսուհետ՝ Օրենք/, Հայաստանի Հանրապետության իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ:

3. Մանկապարտեզի անվանումն է՝
հայերեն լրիվ՝ <<ՀՀ Արարատի մարզի Այգավանի <<ԺՊԻՏ>> մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:
կրճատ՝ <<ՀՀ Արարատի մարզի Այգավան համայնքի <<ԺՊԻՏ>> մանկապարտեզ>> ՀՈԱԿ:

Մանկապարտեզի գտնվելու վայրն է 0604, ՀՀ Արարատի մարզ, գ. Այգավան:

Մանկապարտեզը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորություններ համար պատասխանատու է այդ գույքով: Մանկապարտեզն իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Մանկապարտեզն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր հայերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

Մանկապարտեզն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

Մանկապարտեզն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

Մանկապարտեզը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների կազմակերպությունների հետ:

Մանկապարտեզում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

## 2. ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

Մանկապարտեզի գործունեության առարկան և նպատակը նախադպրոցական կրթական բնույթի գործունեության իրականացումն է:

12. Մանկապարտեզի կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:

13. Մանկապարտեզը, համագործակցելով ընտանիքի հետ, ապահովում է մանկապարտեզում ընդգրկված նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակու թյունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելու և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալների ապահովումը, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

14. Մանկապարտեզի գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության և մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

15. Մանկապարտեզը պատասխանատու է պետական չափորոշիչներին, նախակրթական պետական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության և առողջության պահպանման համար:

16. Մանկապարտեզը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեությամբ:

## 2. ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

7. Մանկապարտեզի երեխաների համակազմի համալրման կարգը և խմբերի առավելագույն
տությունը սահմանվում է պետական կրթական չափորոշիչներով:

8. Մանկապարտեզը ընդունվում են մինչև 6 տարեկան երեխաները՝ առողջության մասին
ժշկական տեղեկանքի հիման վրա:

9. Մանկապարտեզում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է Հայաստանի
անրապետության կրթության և գիտության նախարարության կողմից երաշխավորված նախադպրո
ական կրթության համալիր ծրագրին համապատասխան:
Մանկապարտեզը կարող է մշակել և նախարարության հետ համաձայնեցնելով իրականացնել նաև
ախադպրոցական կրթության հեղինակային ծրագրեր:

0. Մանկապարտեզն իր գործունեության ուղղության համապատասխան իրականացնում
ախադպրոցական կրթական ծրագրեր և ապահովում երեխաների խնամքը:

1. Մանկապարտեզի աշխատանքային ռեժիմը, մանկապարտեզում երեխաների մնալո
տևողությունը, կրթադաստիարակչական խմբերի համալրման և սննդի կազմակերպման կարգ
ոշվում են նախարարության մեթոդական ցուցումներին համապատասխան:
Թույլատրվում է մանկապարտեզի կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը
երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին, ինչպես նաև
երեխաների ազատ հաճախումը մանկապարտեզ:
Մանկապարտեզի երեխաների բժշկական սպասարկումն իրականացվում է մանկապարտեզ
...ային բժշկական անձնակազմի միջոցով, որը մանկապարտեզի տնօրինության հետ պատաս
...վություն է կրում երեխաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելի
...ումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի
...ար:

23.Մանկապարտեզի մանկավարժական և սպասարկող անձնակազմը համայնքի բյուջեի հաշվին պարբերաբար ենթարկվում են բժշկական քննության:

## 3. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

24. Մանկապարտեզի կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցներն են երեխաներն ու ծնողները (օրինական ներկայացուցիչները), մանկավարժական աշխատողները:

25. Երեխաների ընդունելության ժամանակ մանկապարտեզի տնօրինությունը պարտավոր է ծնողներին (նրանց օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են կազմակերպության գործունեությունը:

26. Մանկապարտեզի և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

27. Երեխայի և մանկապարտեզի աշխատակիցների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, երեխայի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:

28. Մանկապարտեզում աշխատանքի ընդունվում են այն անձինք, ովքեր ունեն նախարարության հաստատած որակավորման բնութագրի պահանջներին համապատասխան անհրաժեշտ մասնագիտական-մանկավարժական որակավորում:

29. Մանկապարտեզի աշխատողների իրավունքները, սոցիալական երաշխիքների ու արտոնությունները որոշվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան կազմակերպության կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

30. Մանկապարտեզի աշխատողներն իրավունք ունեն սահմանված կարգով մասնակցելու մանկապարտեզի կառավարմանը, համատեղությամբ կատարելու գիտական, ստեղծագործական և մանկավարժական բնույթի աշխատանքներ:

## 5.ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

31. Մանկապարտեզի կառավարումն իրականացնում է հիմնադիրը՝ համայնքի ղեկավարը, նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ մանկապարտեզի տնօրենը (այսուհետ տնօրեն):

32. Մանկապարտեզի հիմնադիրն ունի կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

33. Մանկապարտեզի հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա/ ավագանու համաձայնությամբ մանկապարտեզի հիմնադրումը.

բ/ մանկապարտեզի գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

գ/ մանկապարտեզի սեփականության իրավունքով հանձնվող և ամրացվող համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը.

դ/ մանկապարտեզի կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

ե/ մանկապարտեզի կառավարման համակարգի սահմանումը.

զ/ մանկապարտեզի վերակազմակերպումը և լուծարումը.

է/ մանկապարտեզի լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

ը/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը.

34. Համայնքի ղեկավարն իրականացնում է մանկապարտեզի ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց կատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

35. Համայնքի ղեկավարը՝

ա/ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է մանկապարտեզի կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

բ/ վերահսկողություն է իրականացնում մանկապարտեզի գործունեության նկատմամբ.

գ/ կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում մանկապարտեզի տնօրենի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

դ/ լսում է մանկապարտեզի գործունեության մասին հաշվետվություններ, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

ե/ վերահսկողություն է իրականացնում մանկապարտեզին ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

զ/ համայնքի ավագանու որոշմամբ համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

է/ հաստատում է մանկապարտեզի տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռ

ը/ իրականացնում է մանկապարտեզի կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթնե

36. Մանկապարտեզի ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավե կազմակերպման նպատակով ձևավորվում է խորհրդակցական մարմին մանկավարժակա խորհուրդ: Համայնքի և ծնողների հետ արդյունավետ համագործակցության նպատակո հաստատությունում կարող են ստեղծել ծնողական, հոգաբարձուների և այլ խորհուրդնե

37. Տնօրենն իրականացնում է մանկապարտեզի ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, ղեկավարում է մանկապարտեզ գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտեր համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրեր պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

38. Տնօրենը՝

ա/ առանց լիազորագրի հանդես է գալիս մանկապարտեզի անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.

բ/ սահմանում է մանկապարտեզի կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

գ/ նախագահում է մանկապարտեզի մանկավարժական խորհրդի նիստերը.

դ/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է մանկապարտեզի գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները.

ե/ տալիս է մանկապարտեզի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

զ/ աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է մանկապարտեզի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

է/ բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

## 6.ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

44. Մանկապարտեզի սեփականությունը ձևավորվում է մանկապարտեզի հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև մանկապարտեզի գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

45. Մանկապարտեզն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և /կամ/ իր կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

46. Հիմնադիրը սեփականության իրավունքով մանկապարտեզին պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

47. Մանկապարտեզի սեփականության պահպանման հոգսը կրում է մանկապարտեզը:

48. Մանկապարտեզի սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձման միայն դատական կարգով:

49.Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից մանկապարտեզին ամրացված գույքը

50. Մանկապարտեզն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:

Մանկապարտեզն իրավունք ունի ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնելու վարձակալությամբ եթե դա արգելված չէ հիմնադրի, ավագանու որոշմամբ կամ մանկապարտեզի կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարվանից ավել բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

Ամրացված գույքի օգտագործման արդյունքում մանկապարտեզի ստացած եկամուտները մանկապարտեզի սեփականությունն են: Մանկապարտեզին ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականություն են: Մանկապարտեզի լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում համայնքի ավագանին:

51. Մանկապարտեզը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

52. Մանկապարտեզը ֆինանսավորում է հիմնադիրը: Մանկապարտեզի ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջետային և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

53.Մանկապարտեզի ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են.

ա/ հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության իրականացումից ստացած միջոցները.

- Լրացուցիչ վճարովի կրթական ծառայությունների կազմակերպում.
- Մարզա- առողջարարական ծառայությունների կազմակերպում.
- Զարգացման շեղումներով երեխաների համար հոգեբանական շտկողական ծառայությունների կազմակերպում.

բ/ բարեգործական, նպատակային ներդրումները, ծնողական վճարները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

գ/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և մանկապարտեզի կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները

54. Մանկապարտեզի տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտ (վերստուգման) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 7. ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

55. Մանկապարտեզը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Աշխատակազմի քարտուղար՝ Մ. Հարությունյան

Հավելված թիվ 3
Այգավան համայնքի ավագանու
Թիվ 2 որոշման 05.03.2014թ.

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՅԳԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ - 14 - / 2014թ./,
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Հաստիքային Միավորը | Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 195000 |
| Հայեցողական պաշտոններ | | |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 150000 |
| Համայնքային ծառայության պաշտոններ | | |
| Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար | 1 | 151000 |
| Համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետ | 1 | 140000 |
| Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ | 2 | 264000 |
| Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ | 1 | 124000 |
| Համայնք ղեկավարի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ | 1 | 122000 |
| Քաղաքացիական աշխատանք | | |
| Օպերատոր | 1 | 116000 |
| Գործավար | 1 | 99000 |
| Գրադարանավար | 1 | 75000 |
| Մշակույթի տան տնօրեն | 1 | 79000 |
| Տեխսպասարկման անձնակազմ | | |
| Պահակ | 1 | 80000 |
| Հավաքարար | 1 | 63000 |
| Ընդամենը՝ | | 1658000 |

Աշխատակազմի քարտուղար՝ [signature] Մ. Հարությունյան

Հավելված թիվ 4
Ավագանու թիվ 2 որոշման
05.03.2014թ.

«ԱՅԳԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ԺՊԻՏ ՄՍՈՒՐ–ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-ի ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՒ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը - 31
2.Աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| | Պաշտոնը | Դրույք | Աշխատա վարձի չափը |
|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 130000 |
| 2 | Մանկավարժ | 0.75 | 61000 |
| 3 | Ֆիզ.դաստ.+պարուսույց | 1.05 | 120000 |
| 4 | Դաշնակահար | 1.25 | 120000 |
| 5 | Դաստիարակչուհի | 10 | 600000 |
| 6 | Հավաք+ դաստ.օգն | 0.5+06 | 120000 |
| 7 | Դաստ.օգնական | 4 | 240000 |
| 8 | Բուժքույր | 1 | 65000 |
| 9 | Տնտեսվար | 1 | 65000 |
| 10 | Հաշվապահ | 1 | 90000 |
| 11 | Գործավար | 1 | 60000 |
| 12 | Գանձապահ | 1 | 60000 |
| 13 | Խոհարար | 2 | 120000 |
| 14 | Դերձակ օժ.բանվոր | 1 | 60000 |
| 15 | Ցերեկային պահակ | 0.5 | 65000 |
| 16 | Լվացարար | 1 | 60000 |
| 17 | Պարտիզպան | 0.5 | 60000 |
| 18 | Պահակ | 1 | 65000 |

Աշխատակազմի քարտուղար՝ Մ. Հարությունյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 3

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգավան համայնք
22, Արարատի մարզ, գ.Այգավան, 0234-6-00 89 aygavan1@mail.ru

05 մարտի 2014թ.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 2-րդ կետի պահանջներով:

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հաստատել Այգավանի համայնքի զարգացման 2014 - 2018թթ. ծրագիրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ՄԿՐՏՉՅԱՆ ՀԵՆՐԻԿ
2. ԵՂՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ
4. ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ
5. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ ԱՇՈՏ
6. ՄԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ
7. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ

Համայնքի ղեկավար՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված 1
Ավագանու թիվ 3 որոշման
05.03.2014թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

## ԱՅԳԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

## 2014 –2018թթ. ՍՈՑԻԱԼ –ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

# ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Հաստատվել է համայնքի ավագանու 05.03.2014թ. նիստում

Այգավանի գյուղապետ Վ. Հարությունյան

ԱՅԳԱՎԱՆ 2014թ.
( համայնքի անվանումը )

Այգավան գյուղը / նախկինում՝ Ռեհանլու / վերաբնակեցվել է 1828 թ-ին Սալմաստ գավառի Մակվեցի գաղթականներով /հիմք՝ ՀՀ հանրագիտարան/: Գյուղն ավելի հին է քան ենթադրվում է: Գյուղի կողքին է հին /4000-ամյա/ բլուրը, որի պեղումներից պարզվել է, որ բնակատեղի է եղել դեռևս քարե դարում:
Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 810-825 մ բարձրության վրա... Վեդի .. գետի ափին:
Գյուղն ապահովված է խմելու ջրով, որի հիմնական աղբյուրն խորքային հորի ջուրն է: Ոռոգման ջրի հիմնական աղբյուրը նույնպես խորքային հորերն են, որոնք 12-ն են:

## ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղում ապրում են 4527 բնակիչներ, որոնցից տղամարդիկ կազմում են բնակչության 49.9%:
Գրանցված ընտրողների թիվը --3100
Վարչական տարածքը -- 834 հա

## ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Գյուղը կառավարվում է համայնքի ղեկավարի /գյուղապետի/ կողմից, որն ընտրվում է չորս տարին մեկ անգամ:
Աշխատակազմի ապարատը բաղկացած է 14 հոգուց:
Համայնքի ավագանին բաղկացած է 8 անդամից:

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 14.03.1997թ. թիվ 51 որոշմամբ հետևյալ կազմով՝

Մսուր - մանկապարտեզ 1 միավոր

Մշակույթի տուն 1 միավոր

Գրադարան 1 միավոր

Բուժ - ամբուլատորիա 1 միավոր

Հրապարակ 1 միավոր

Հուշարձան 1 միավոր

Վարչական շենք 1 միավոր

Փոստի շենք 1 միավոր

Ջրամատակարարման ներհամայնքային

համակարգ 39 կմ.

Ոռոգման ներհամայնքային համակարգ 40 կմ.

Գազամատակարարման ներհամայնքային

համակարգ 20.4 կմ.

Գյուղ – տեխնիկա և գործիքներ 12 միավոր

Ներհամայնքային նշանակության ճանապարհներ

և փողոցներ 28 կմ.

Ներհամայնքային կամուրջներ – 4

Գերեզմանատուն – 1

Տնտեսական անկման հետևանքով, համայնքի գույքի ֆիզիկական վիճակը վատթարացել է: Պահեստամասերի և քսայուղերի պակասի հետևանքով առանց այն էլ տարիքով մեծ գյուղ – տեխնիկան և գործիքները անմխիթար վիճակում են: Խմելու ջրի խողովակները որոշ փողոցներում կառուցվել է 60 –ականներին, որոնք մաշվել և քայքայվել են: Նախատեսվում է 2014թ-ին կառուցել գյուղի ջրամատակարարման Վանաշեն - Այգավան2.3 կմ. ջրագիծ:Նախատեսվում է նաև 2014-2018թթ. փոխել գյուղի ներքին ցանցից 2000մ ջրագիծ: Ճանապարհային ցանցը վերանորոգման կարիք ունի : Ներկայումս անհրաժեշտ է վերանորոգել 1.5 կմ. ճանապարհ և խճապատել նոր բացված 1,5 կմ փողոցներ:

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղբահանությունը կատարվում է կազմակերպված ձևով` գյուղապետարանի կողմից:

## ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կա 800 առանձնատուն 1410000 քմ. տարածքով:
Բնակարանով անապահով և կարիքավոր ընտանիքների թիվը 25 –ից ավելի է: Կան մի –քանի վթարային տներ: Համայնքապատկան բնակելի տներ չկան:

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի վարչական տարածքը 834.7 հա է որից
1. Վարելահող – 287.33

2. Բազմամյա տնկարկներ – 244.83
ա) այդ թվում պտղատու – 66.96
բ) այդ թվում խաղողի – 177.87

3. այլ հողատեսքեր – 64.30

Ընդամենը — 596.46

Բնակելի — 165.08
Այդ թվում տնամերձ — 165.04
Հասարակական — 4.4
Ընդհանուր — 24.70
Այլ հողեր — 8.91

---

Ընդամենը 204.03
Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտ. — 5.78
Էներգետիկայի կապի, տրանսպորտի — 16.29
Պատմական — 6.83
Գետեր — 5.32
Դպրոց — 2.3
Հուշարձան — 0.1
Սեփականաշնորհված հողեր 4.78
Մեկ հողաբաժնի չափը 0.3
Համայնքի սեփականության հողեր 147.24

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գյուղացիները հիմնականում զբաղվում են բանջարաբուծությամբ և խաղողագործությամբ: Այժմ մեծ զարկ է տրվել մրգատու և պտղատու այգիների հիմնմանը: Վերջի տարիներին նոր պտղատու այգիներ են հիմնում հիմնականում տնամերձ հողամասերում: Աճեցվում են ծիրանի, դեղձի, բալի, կեռասի և այլ ծառեր, որոնք էլ հանդիսանում են գյուղացիների հիմնական եկամուտի աղբյուրը:
Ոռոգման ջուրը մատակարարվում է 100 %:
Արտաշատի ջրանցքի, 30% Արաքսի պոմպակայանի իսկ 60%-ը 12 խորքային հորերի կողմից:
Զբաղվում են նաև անասնապահությամբ՝ ոչխարաբուծությամբ և խոզաբուծությամբ:
Գյուղն ունի զարգացած ոչխարաբուծություն: 2014թ-ի հունվարի մեկի տվյալներով գյուղացիները ունեն շուրջ 11800 գլուխ մանր եղջերավոր անասուններ, 372 խոշոր եղջերավորներ:

## Կ Ր Թ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Գյուղն ունի մեկ միջնակարգ դպրոց, նախատեսված՝ 1000 աշակերտի համար, ուր սովորում են 420 աշակերտ: Դպրոցն ունի 58 աշխատատեղ, մեկ ուսուցչին ընկնում է 12 աշակերտ: Վերջին տարիներին շենքը մասնակի վերանորոգվել է, փոխվել է տանիքը և լուսամուտները, կառուցվել է կենտրոնական ջեռուցում : Մսուր – մանկապարտեզի շենքը կառուցվել է 1975թ-ին ընթացիկ վերանորոգման է ենթարկվել 1990թ.-ին: Ունի ընթացիկ վերանորոգման կարիք: Շենքը արտաքինից գեղեցիկ է և երկհարկանի կառույց է:Նախատեսվում է 2014-2018թթ. վերանորոգել մսուր մանկապարտեզի շենքը: Նախատեսված է 150 երեխայի համար: Այժմ գործում է 5 խումբ՝ 135 երեխա: Աշխատում են 32 աշխատողներ:

## ԿՈՒԼՏ – ՏՈՒՆ

1966թ.-ին շահագործման հանձնված մշակույթի տան շենքը գեղեցիկ, ճարտարապետական կառուցվածք ունեցող արտաքին ունի:
Երկհարկանի շենք է, 350 տեղանոց դահլիճով, ընդարձակ սրահներով: Մինչև օրս վերանորոգման չի ենթարկվել և 1990թ-ին կոլտնտեսությունը նախապատրաստել է վերանորոգման, սակայն մինչև օրս քանդված մնացել է: 2002թ-ի սեպտեմբեր ամսից գյուղապետարանը իր ուժերով որոշ աշխատանքներ կատարել է. վերանորոգել են հրապարակը, դրսի և ներսի դռները, լուսամուտները և դահլիճում 150 նստարան: Սակայն սուղ ֆինանսական դժվարությունների պատճառով չի շարունակվում: Նախատեսվում է 2014 –2018թթ-ներին կատարել շենքի վերանորոգման աշխատանքներ:
Գործող գրադարանն ունի 10000 անուն գրականություն, տեղավորված է կուլտուրայի տան երկրորդ հարկում, ունի ընթերցարան, սակայն չի ջեռուցվում: Գյուղն ունի սպորտ հրապարակ, որը մինչև 2002թ-ի սեպտեմբեր ամիսը քարծիթոտի վիճակում էր:
Սեպտեմբեր ամսից համայնքի ուժերով մաքրվել, հարթեցվել է այն: Կառուցվել է ժամանակավոր պարիսպ, վերանորոգվել են դարպասները, խոտածածկույթ է ստեղծվել: Կառուցվել է ջրավազան:
2014 -2018թթ-ին նախատեսվում է կառուցել վազքուղիներ, ջրավազան, թենիսի դաշտ:

## ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Բուժ ամբուլատորիան վերակառուցվել է 1999թ-ին Յ/Բ -ի օգնությամբ: Աշխատում են 2 բժիշկ և 5 բուժքույր:
Ապահովված է շտապօգնության մեքենայով:

## ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքն ունի շուրջ 250 բուհի շրջանավարտ, տարբեր մասնագիտություններ որոնք կարողանում են կազմակերպել կրթության ու դաստիարակության գյուղատնտեսական և շինարարական աշխատանքներ:
Գյուղի հողերը 80% Արարատյան դաշտի ամենաբերրի հողերն են 2 –խումբ: Կարելի է զարգացնել խաղողագործությունը: Աճում են արևահամ ծիրան, դեղձ և այլ մրգեր: Եթե չլինեին բնության արհավիրքները, ապա բնակչության կենսամակարդակը շատ ավելի բարձր կլիներ: Կարելի է ջրի արտադրամաս կառուցել: Նախատեսվում է նախկին կոլտնտեսության ֆերմաների շենքերից մեկը կամ երկուսը օգտագործել անասնապահական փոքր ֆերմա ստեղծելու համար:

## ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Գյուղում չկան հարուստ ներդրողներ, որոնք կօգնեին ստեղծելու մոտ 200 աշխատատեղ: Այսպես գյուղի բնակչության 15%-ը կամ հող չունի, կամ էլ ընտանիքին հատկացված հողն այնքան քիչ է, որ նույնիսկ լավ մշակելու դեպքում էլ չի բավարարում ընտանիքի մինիմալ պահանջները: Արտադրած գյուղմթերքները էժան են և վատ են սպառվում: Գյուղն ունի անասնապահական ֆերմաների շենքեր և այլ արտադրական տարածքներ:

## ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Քանի որ համայնքի բնակչությունը օգտագործում է որպես խմելու ջուր արտեզյան ջուրը, որի մեջ աղերի քանակը շատ – շատ է:
Բնական աղետների / կարկուտ, ցրտահարություն և այլն/ պատճառով գյուղացին համախակի կորցնում է բերքը, որն էլ պատճառ է դառնում գյուղացու անվճարունակությանը:
Հարկերի և վարձավճարների գրանցման դժվարությունները մեծ վտանգ են սպառնում համայնքի բյուջեի կատարմանը:

## ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ և ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ – տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, գյուղը դարձնել գեղեցիկ, բարեկարգ և բարեկեցիկ: Բարեփոխումներ կատարելով, նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին:
Զարգացնել գյուղատնտեսությունն ու անասնապահությունը համայնքում:
Համայնքն ապահովվել շուրջօրյա խմելու ջրով (կառուցել ջրագիծ Վանաշեն -Այգավան , մոտ 2.5 կմ):
Օգտագործելով տեղական հնարավորությունները ստեղծել 200 աշխատատեղ, որի համար գտնել դրսի ներդրողներ: Ասֆալտապատել Ծ. Սարգսյանի փողոցի 1200քմ:
Կազմակերպել համայնքի բնակչության մշակութային կյանքը և հանգիստը աշխատանքից ազատ ժամերին:

(1) Խճապատել փողոցները յուրաքանչյուր տարի 900000 դրամի ,
Ոռոգման ջրի կիսախողովակների անցկացում 1.5 – 2.5 կմ,
Վերանորոգել կուլտուրայի տան տանիքը ,
Մ. Մանկապարտեզի տանիքի և մեկ ճանապարհի վերանորոգում և այլն:

Աշխատակազմի քարտուղար՝ Մ. Հարությունյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 4

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգավան համայնք
22, Արարատի մարզ, գ.Այգավան 0234-6-00-89 aygavan1@mail.ru

05 մարտի 2014թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՎ ԱՆՑՆՈՂ ԿՈՅՈՒՂԱԳԾԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՐՎԻՏՈՒՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 210 և Հողային օրենսգրքի 50- հոդվածների պահանջներով`

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Սահմանել սերվիտուտ համայնքի տարածքով անցնող , Արամայիս Թեմուրի Գրիգորյանին պատկանող կոյուղագծի զբաղեցրած 1501քմ հողամասի նկատմամբ:

Կողմ 7 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ՍԻՔՏԻՄՅԱՆ ՀԵՆՐԻԿ
2. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ
4. ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ
5. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ ԱՆԳԻՆ
6. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ
7. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ

Համայնքի ղեկավար` ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 5

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Այգավան, 0234-6-00-89 aygavan1@mail.ru

05 մարտի 2014թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԱՆԴԱՄԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ունենալով վերոգրյալը և ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի պահանջներով

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի ու պետական հատված ներկայացնող անդամ առաջադրել Այգավան գյուղի բնակիչ, ՀՀԿ անդամ Աղասի Բաբիկի Մկրտչյանին։

Կողմ -7 Դեմ 0 Ձեռնպահ 0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ
2. ԵԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ
4. ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ
5. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ ԱՆԳԻՆ
6. [illegible]
7. [illegible]

Համայնքի ղեկավար ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 6

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգավան համայնք
22, Արարատի մարզ, գ.Այգավան, 0234 6-00-89 aygavan1@mail.ru

05 մարտի 2014թ.

### ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ N0118 ԽՈՐՔԱՅԻՆ ՀՈՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի պահանջներով

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Այգավան համայնքի տարածքում գտնվող N0118 խորքային հորը վերադարձնել համայնքին՝ օգտագործելու նպատակով:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ
2. ԵՂՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ [illegible]
4. [illegible]
5. [illegible]
6. [illegible]
7. [illegible]

Համայնքի ղեկավար՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 7

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգավան համայնք
22, Արարատի մարզ, գ.Այգավան, 0234-6-00-89 aygavan1@mail.ru

05 մարտի 2014թ.

## ԱՅԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 203Թ.-Ի ԹԻՎ 11 ՈՐՈՇՈՒՄԸ ՕՐԵՆՔԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 75 հոդվածի պահանջներով

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1.Չեղյալ ճանաչել Այգավան համայնքի ավագանու 2013թ.-ի թիվ 11 որոշման 5-րդ, 6-րդ, 7-րդ, 10-րդ և 12-րդ կետերը:

2.Ավագանու վերոհիշյալ որոշումը համապատասխանեցնել <<Տեղական տուրքերի և Վճարների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքին և բնթերցել հետևյալ կերպ.

5/ կետի ա/ ենթակետի 2-րդ տողը.

սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:

6/ կետի բ/ ենթակետը .

Համայնքին սննդի և գվարճանքի օբեկտների համար 100000 դրամ.

7/ կետի բ/ ենթակետի երրորդ տողը

արտադրանք զովազդող արտաքին գովազդի համար 3500դրամ:

10/ կետի 2-րդ տողը.

1000 դրամ մասնակցության վճար:

12/ կետ

Աղբահանության համար տեղական վճարը սահմանել տարեկան յուրաքանչյուր շնչից 50 դրամ

Կողմ 0 Դեմ 0 Ձեռնպահ 0

1. ԱՎԱՏԻՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ

2. ԷԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ

3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ

4. ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՄԼԵՏ

5. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ ԱՆԳԻՆ

6. ՄԱՀԱԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ

7. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ

Համայնքի ղեկավար՝ ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այգավան համայնք
22, Արարատի մարզ, գ.Այգավան, 0234-6-00-89 aygavan1@mail.ru

05 մարտի 2014թ.

### ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ.-Ի ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ կետի պահանջներով.

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հաստատել Այգավան համայնքի 2013թ.-ի բյուջեի տարեկան հաշվետվությունը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ
2. ԿԼՈՅԱՆ ՏԻԳՐԱՆ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԵՂԱՄ
4. ՊՈՂՈՍՅԱՆ ՀԱՄԼԵՏ
5. [illegible]
6. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ
7. ՍԻՄՈՆՅԱՆ ՆՈՐԱ

Համայնքի ղեկավար ՎԻԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված 1
ավագանու
թիվ 8 որոշման
05.03.2014թ.

# Բյուջետային հաշվետվ.(բոլոր տողերի)
## 02/01/13 - 30/12/13

Հաշիվ - 22
Ծրագրեր -
Նախապատվություններ - 203008
Հոդվածներ -

13/01/14 11:39:34

02/01/13 - 30/12/13 R_259
(հազ. դրամ)

| Խմբերի և ենթախմբերի անվանումները | Գումար | Պլան | % կատար |
|---|---|---|---|
| Ընդամենը | 75,485.74 | 79,875.53 | 94.5 |
| 1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 27,349.17 | 28,493.20 | 95.9 |
| 1 Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, | 27,349.17 | 28,493.20 | 95.9 |
| 1 Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում | 27,349.17 | 28,493.20 | 95.9 |
| 51 Կառավարման մարմնի պահպանում | 27,349.17 | 28,493.20 | 95.9 |
| 203008 Այգավան | 27,349.17 | 28,493.20 | 95.9 |
| 900422111055 ԱՅԳԱՎԱՆ Կառավարման մարմնի պահպանում | 26,779.17 | 27,863.20 | 96.1 |
| 4111 - Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 22,034.12 | 22,103.20 | 99.6 |
| 4212 - Էներգետիկ ծառայություններ | 1,375.00 | 1,400.00 | 98.2 |
| 4213 - Կոմունալ ծառայություններ | 70.00 | 70.00 | 100.0 |
| 4214 - Կապի ծառայություններ | 55.00 | 100.00 | 55.0 |
| 4232 - Համակարգչային ծառայություններ | 318.00 | 900.00 | 35.3 |
| 4234 - Տեղեկատվական ծառայություններ | 0.00 | 150.00 | 0.0 |
| 4251 - Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 700.00 | 700.00 | 100.0 |
| 4252 - Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և | 600.00 | 600.00 | 100.0 |
| 4261 - Գրասենյակային նյութեր և հագուստ | 250.00 | 400.00 | 62.5 |
| 4264 - Տրանսպորտային նյութեր | 637.05 | 700.00 | 91.0 |
| 4267 - Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 740.00 | 740.00 | 100.0 |
| 900422111253 Կառավարման մարմնի պահպ.նույ | 570.00 | 630.00 | 90.4 |
| 4131 - Վճարներ Սոցիալական ապահովագրության պետական | 570.00 | 630.00 | 90.4 |
| 4 ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 2,289.54 | 2,391.60 | 95.7 |
| 2 Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և | 300.00 | 300.00 | 100.0 |
| 4 Ոռոգում | 300.00 | 300.00 | 100.0 |
| 51 Ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում | 300.00 | 300.00 | 100.0 |
| 203008 Այգավան | 300.00 | 300.00 | 100.0 |
| 900422111089 Ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգ | 300.00 | 300.00 | 100.0 |
| 4213 - Կոմունալ ծառայություններ | 300.00 | 300.00 | 100.0 |
| 5 Տրանսպորտ | 1,989.54 | 2,091.60 | 95.1 |
| 1 Ճանապարհային տրանսպորտ | 1,989.54 | 2,091.60 | 95.1 |
| 51 Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում | 1,989.54 | 2,091.60 | 95.1 |
| 203008 Այգավան | 1,989.54 | 2,091.60 | 95.1 |
| 900422111188 Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում | 1,989.54 | 2,091.60 | 95.1 |
| 5113 - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 1,789.54 | 1,891.60 | 94. |

(հազ. դրամ)

| Խմբերի և ենթախմբերի անվանումները | Գումար | Պլան | % կատար |
|---|---|---|---|
| 5134 - Նախագծահետազոտական ծախսեր | 200.00 | 200.00 | 100.00 |
| 5 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | 1,700.00 | 2,250.00 | 75.56 |
| 1 Աղբահանում | 1,500.00 | 2,000.00 | 75.00 |
| 1 Աղբահանում | 1,500.00 | 2,000.00 | 75.00 |
| 51 Աղբահանություն և սանիտարական մաքրում | 1,500.00 | 2,000.00 | 75.00 |
| 203008 Այգավան | 1,500.00 | 2,000.00 | 75.00 |
| 900422111121 Աղբահանություն և սանիտարական մաքրու | 1,500.00 | 2,000.00 | 75.00 |
| 4213 - Կոմունալ ծառայություններ | 1,500.00 | 2,000.00 | 75.00 |
| 5 Շրջակա միջավայրի պաշտպանության գծով հետազոտական և | 200.00 | 250.00 | 80.00 |
| 1 Շրջակա միջավայրի պաշտպանության գծով հետազոտական և | 200.00 | 250.00 | 80.00 |
| 51 Կանաչ տարածքների պահպանում | 200.00 | 250.00 | 80.00 |
| 203008 Այգավան | 200.00 | 250.00 | 80.00 |
| 900422111220 Կանաչ տարածքների պահպանում | 200.00 | 250.00 | 80.00 |
| 4269 - Հատուկ նպատակային այլ նյութեր | 200.00 | 250.00 | 80.00 |
| 6 ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ | 11,455.33 | 11,720.00 | 97.74 |
| 4 Փողոցների լուսավորում | 6,654.33 | 6,690.00 | 99.47 |
| 1 Փողոցների լուսավորում | 6,654.33 | 6,690.00 | 99.47 |
| 51 Արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգում | 6,654.33 | 6,690.00 | 99.47 |
| 203008 Այգավան | 6,654.33 | 6,690.00 | 99.47 |
| 900422111196 Արտաքին լուսավորության ցանցի հիմնա | 6,654.33 | 6,690.00 | 99.47 |
| 4212 - Էներգետիկ ծառայություններ | 1,565.00 | 1,600.00 | 97.81 |
| 5112 - Շենքերի և շինությունների շինարարություն | 4,889.33 | 4,890.00 | 99.99 |
| 5134 - Նախագծահետազոտական ծախսեր | 200.00 | 200.00 | 100.00 |
| 6 Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ | 4,801.00 | 5,030.00 | 95.45 |
| 1 Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ | 4,801.00 | 5,030.00 | 95.45 |
| 55 Ջրային կառույցների շահագործում և պահպանում | 4,801.00 | 5,030.00 | 95.45 |
| 203008 Այգավան | 4,801.00 | 5,030.00 | 95.45 |
| 900422111170 Ջրային կառույցների շահագործում և պա | 4,801.00 | 5,030.00 | 95.45 |
| 4212 - Էներգետիկ ծառայություններ | 4,242.00 | 4,370.00 | 97.07 |
| 4213 - Կոմունալ ծառայություններ | 559.00 | 660.00 | 84.70 |
| 8 ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ | 6,519.00 | 6,900.00 | 94.48 |
| 3 Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական | 0.00 | 100.00 | 0.00 |
| 2 Հրատարակչություններ, խմբագրություններ | 0.00 | 100.00 | 0.00 |
| 51 Տեղեկատվության ձեռք բերում | 0.00 | 100.00 | 0.00 |
| 203008 Այգավան | 0.00 | 100.00 | 0.00 |
| 900422111238 Տեղեկատվության ձեռք բերում | 0.00 | 100.00 | 0.00 |
| 4234 - Տեղեկատվական ծառայություններ | 0.00 | 100.00 | 0.00 |
| 5 Հանգստի, մշակույթի և կրոնի գծով հետազոտական և նախագծային | 6,519.00 | 6,800.00 | 95.87 |

13/01/14 11:39:34

02/01/13 - 30/12/13 R_259

(հազ. դրամ)

| Խմբերի և ենթախմբերի անվանումները | Գումար | Պլան | % կատար |
|---|---|---|---|
| 1 Հանգստի, մշակույթի և կրոնի գծով հետազոտական և նախագծային | 6,519.00 | 6,800.00 | 95.87 |
| 51 Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող) | 6,519.00 | 6,800.00 | 95.87 |
| 203008 Այգավան | 6,519.00 | 6,800.00 | 95.87 |
| 900422111154 Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասեր | 6,519.00 | 6,800.00 | 95.87 |
| 4239 - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 5,669.00 | 5,900.00 | 96.08 |
| 4269 - Հատուկ նպատակային այլ նյութեր | 850.00 | 900.00 | 94.44 |
| 9 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | 21,024.70 | 21,920.73 | 95.91 |
| 1 Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն | 20,019.70 | 20,620.73 | 97.09 |
| 1 Նախադպրոցական կրթություն | 20,019.70 | 20,620.73 | 97.09 |
| 51 Նախադպրոցական ուսուցում | 20,019.70 | 20,620.73 | 97.09 |
| 203008 Այգավան | 20,019.70 | 20,620.73 | 97.09 |
| 900422111147 Նախադպրոցական կրթություն | 20,019.70 | 20,620.73 | 97.09 |
| 4639 - Այլ ընթացիկ դրամաշնորհներ | 20,019.70 | 20,620.73 | 97.09 |
| 4 Բարձրագույն կրթություն | 1,005.00 | 1,300.00 | 77.31 |
| 1 Բարձրագույն մասնագիտական կրթություն | 1,005.00 | 1,300.00 | 77.3 |
| 51 Հետբուհական մասնագիտական կրթություն | 1,005.00 | 1,300.00 | 77.3 |
| 203008 Այգավան | 1,005.00 | 1,300.00 | 77.3 |
| 900422111139 ԿԱՐԻՔ ԸՆՏ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹ ՍՏ ԵՐԵՄ Ռ | 1,005.00 | 1,300.00 | 77.3 |
| 4239 - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 700.00 | 700.00 | 100. |
| 4729 - Այլ նպաստներ բյուջեից | 305.00 | 600.00 | 50. |
| 10 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | 5,148.00 | 6,200.00 | 83 |
| 7 Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) | 5,148.00 | 6,200.00 | 83 |
| 1 Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) | 5,148.00 | 6,200.00 | 83 |
| 54 Սոցիալապես անապահով անձանց աջակցություն | 4,808.00 | 5,500.00 | 87 |
| 203008 Այգավան | 4,808.00 | 5,500.00 | 87 |
| 900422111162 Սոց անապահով անձանց Այգավան | 4,808.00 | 5,500.00 | 8 |
| 4726 - Հուղարկավորության նպաստներ բյուջեից | 623.00 | 700.00 | 8 |
| 4729 - Այլ նպաստներ բյուջեից | 4,185.00 | 4,800.00 | [illegible] |
| 55 Հասարակական կազմակերպություններին աջակցություն | 340.00 | 700.00 | |
| 203008 Այգավան | 340.00 | 700.00 | |
| 900422111204 Այգավան Հաս կազմակերպութ | 340.00 | 700.00 | |
| 4819 - Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող | 340.00 | 700.00 | |

Աշխատակազմի քարտուղար Մ. Հարությունյան